

Մարզկենտրոնը՝
ք. Իջևան

Տարածաշրջանները՝
Իջևան,
Դիլիջան,
Նոյեմբերյան,
Տաուշ

Քաղաքները՝
Իջևան,
Դիլիջան,
Բերդ,
Նոյեմբերյան,
Այրում

Տարածքը	2 704 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	9.1%
Համայնքներ, 2017թ. տարեսկզբի դրությամբ	40
Քաղաքներ	5
Գյուղեր	61
Բնակչության թվաքանակը 2017թ. տարեսկզբի դրությամբ	124.5 հազ.մարդ
այդ թվում՝	
քաղաքային	52.5 հազ.մարդ
գյուղական	72.0 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	4.2 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	42.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	110 751.5 հա
այդ թվում՝ վարելահողեր	25 577.7 հա

ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հան-րապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Մրզը հարավ-արևելքում և հարավում սահմանակից ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին և պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին:

Մարզի կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է Աղստև գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 390մ, ամենաբարձր կետը՝ Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2 993 մ:

ՀՀ Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Գտնվում է ՀՀ չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1 900-2 000 ժամ է: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից

ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: Այստեղ են գտնվում Ջողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի արհեստական ջրամբարները:

Մարզի ընդհանուր մակերեսի 40.3%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին: Մարզի և հասկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

Իջևան քաղաքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Ենոքավան գյուղի վարչական տարածքի (ծովի մակերեսով 1 370 մ բարձրության վրա) 7 հա տարածության վրա գործում է Հայաստանում նախադեպը չունեցող էքսթրիմի և զվարճանքների պարկը, որտեղ ընթացքի մեջ է աշխարհի ամենաերկար ճոպանագծի շինարարությունը: Պարկում տարեցտարի ավելանում են ակտիվ հանգստի տեսակները, ինչպես նաև ջրային սպորտաձևերը: Այցելուների թվաքանակի աճը վկայում է, որ այն ուշագրավ է դարձել նաև արտերկրից ժամանող զբոսաշրջիկների համար և կյանքի էկոտուրիզմի զարգացումը երկրում:

Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դուրմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը:

Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս – Թբիլիսի – Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը (ներկայումս չի գործում): Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

Մարզի 47 բնակավայրեր սահմանամերձ են Աղբբեջանին և ունեն ռազմավարական կարևոր նշանակություն՝ մշտապես կրելով պատերազմական իրադարձությունների հետևանքներ: Դրանով է պայմանավորված նաև այդ բնակավայրերի քիչ բնակեցվածությունն ու տնտեսապես թույլ զարգացվածությունը:

2016թ.-ին Տավուշի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.9 %
- գյուղատնտեսություն՝ 4.5 %
- շինարարություն՝ 3.1 %
- մանրածախ առևտուր՝ 2.0 %
- ծառայություններ՝ 0.8 %

Մարզը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Ծրագրեր են իրականացվում պտղատու այգիների վերականգնման ուղղությամբ: Վերջին տարիներին զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել զերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում գինիներ, պահածոներ, հանքային ջուր, քարե և փայտե, վերջերս նաև տեքստիլ արտադրատեսակներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոն Իջևան քաղաքը (2017թ. տարեվերջին՝ 20.6 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 133 կմ հեռավորության վրա: Մարզի հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ փայտամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և գինու արտադրությունը): Իջևան քաղաքը հայտնի է նաև գորգագործությամբ, սակայն վերջին տարիներին այդ գործունեությամբ քիչ են զբաղվում:

Դիլիջան քաղաքի (2017թ. տարեկգրին՝ 17.5 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 99 կմ է: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը: Լայն ճա-նաչում է ստացել «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը: 2014թ. սեպտեմբերից գործում է «Դիլիջան ինտերնեյշլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը, իսկ 2013թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը:

Քաղաքի ճարտարապետական տեսքին առանձնակի վայելչություն է տալիս ՀՀ կենտրոնական բանկի մասնաճյուղի իր օժանդակ կառույցներով:

Ներկայումս մեծ աշխատանքներ են տարվում բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային զբոսաշրջության զարգացման ոլորտում քաղաքի երբեմնի ունեցած համբավի վերականգնման ուղղությամբ:

Նոյեմբերյան քաղաքի (2017թ. տարեկգրին՝ 4.8 հազ. մարդ) հեռավորությունը Երևանից 187 կմ է: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունն անասնաբուծությունն ու դաշտավարությունն է:


Այրում քաղաքի (2017թ. տարեկգրին՝ 1.9 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 206 կմ է: Այն կայա-
րանամերձ քաղաք է, բնակչության հիմնական զբաղմունքը մանրածախ առևտուրն է:

Վերջին տարիներին Նոյեմբերյանի տարածքում լայն թափով զարգանում է պտղաբուծությունը, հատկապես՝
դեղձի այգիների հիմնումը, ինչը կնպաստի Այրումի պահածոների գործարանի վերագործարկմանը:

Բերդ քաղաքի (2017թ. տարեկգրին՝ 7.7 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 202 կմ է: Քաղաքի տնտեսա-
կան կյանքում գերակշռողը բազմաճյուղ գյուղատնտեսությունն է, որի մեջ առանձնանում են խոշոր և մանր
եղջերավոր անասնաբուծությունն ու դաշտավարությունը:

Քաղաքի տնտեսական զարգացման գործում մեծ նշանակություն կունենա գործարկվող տեքստիլ արտա-
դրության ձեռնարկությունը, որը նաև սահմանապահ բնակավայրերի բնակչության զբաղվածության և միգրացիոն
արտահոսքի կանխման խնդիրներ կլուծի:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2017թ. հունվարի 1-ի դրությամբ



ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2012	2013	2014	2015	2016
Մանրածախ առևտրի օբյեկտներ, բնդամներ	1 036	1 012	1 025	1 145	1 161
այդ թվում՝					
խանութներ	672	659	698	848	874
կրպակներ	327	312	290	252	240
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	1	1	1	1	1
առևտրի այլ օբյեկտներ	35	39	35	43	45

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2012	2013	2014	2015	2016
Պետական նախադպրոցական	55	55	59	59	58
Ոչ պետական նախադպրոցական	1	1	1	-	-
Պետական հանրակրթական	81	81	81	81	81
Ոչ պետական հանրակրթական	-	-	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	19	19	19	19	18
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	3	3	3	3	3
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Իջևան	20 610
Դիլիջան	17 521
Բերդ	7 679
Նոյեմբերյան	4 800
Այրում	1 935

ԳՅՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
1	Ագատամուտ	2 659
2	Բարխուդարյու	-
3	Ակնադբյուր	523
4	Աճարկուտ	181
5	Ալգեհովիտ	3 317
6	Կայան	320
7	Աչաջուր	4 076
8	Բերքաբեր	350
9	Գանձաքար	3 487
10	Գետահովիտ	1 938
11	Դիտավան	361

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
12	Ենոքավան	512
13	Լուսահովիտ	323
14	Լուսաձոր	690
15	Խաչթառակ	1 815
16	Ծաղկավան	505
17	Կիրանց	306
18	Սարիգյուղ	1 270
19	Սևքար	2 048
20	Վազաշեն	861
Ռիիցանի տարածաշրջան		
1	Աղավնավանք	247
2	Գեղատափ	-
3	Գոշ	1 134
4	Թեղուտ	1 512
5	Խաչարձան	363
6	Հաղարծին	3 480
7	Հովք	428
8	Ճերմակավան	-
Նոյեմբերյանի տարածաշրջան		
1	Արձիս	1 088
2	Բագրատաշեն	2 810
3	Բաղանիս	856
4	Բարեկամավան	227
5	Բերդավան	3 202
6	Դեբեդավան	590
7	Դեղձավան	301
8	Դովեղ	526
9	Զորական	919
10	Լճկաձոր	430
11	Կոթի	1 993
12	Կողբ	4 585
13	Հաղթանակ	1 300
14	Ոսկեպար	818
15	Ոսկեվան	1 386
16	Պտղավան	789
17	Ջուջևան	550
Տաուշի տարածաշրջան		
1	Ալգեձոր	1 880
2	Ալգեպար	560
3	Արծվաբերդ	2 848
4	Իճաքար	315
5	Ծաղկավան	853
6	Մոսեսգեղ	1 719
7	Նավուր	1 049
8	Ներքին Կարմիր աղբյուր	1 057
9	Նորաշեն	1 616
10	Չինարի	933
11	Չինչին	552
12	Չորաթան	1 003
13	Պառավաքար	1 613
14	Վարագավան	578
15	Վերին Կարմիր աղբյուր	1 596
16	Տավուշ	1 600

* ՀՀ մարզերի բաղադրանքի բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

** ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղերի կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 952 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեզիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2017թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +13.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2016թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 221	4 779
Ծնվածներ, մարդ	112	53	59
Մահացածներ, մարդ	113	55	58
Ամուսնություններ	52	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	48.4	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	266	132	134
հանրակրթական	1 275	622	653
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	165	110	55
նախնական մասնագիտական (արհեստագործական)	20	5	15
միջին մասնագիտական	60	27	33
բարձրագույն մասնագիտական	139	77	62
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	31 161
Մարզիկներ, մարդ	53	7	46
Զբաղվածներ, մարդ	3 862	2 038	1 824
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	159	132	27
բժիշկներ	18
միջին բուժանձնակազմ	45
Գործազուրկներ, մարդ	550	227	323
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 717	1 049	668
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	423	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	19 545
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	419
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	50	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	25	X	X
միջին ծանրության	20	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	1	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: